Ճարտարապետական մաս՝ «ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ(ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ, արտոնագիր՝ ՃԲԴ-Ա-0103)

Կոնստրուկտորական մաս՝ «ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ(ՆԻԿՈԼԱՅ ՍՏԵՓԱՆՅԱՆ, արտոնագիր՝ ԿԵԴ-Ա2-020)

կողմից

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ ՈԱ26/90 «ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ» ընկերության կողմից

(նշել նախագիծը թողարկող պատասխանատուկապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների՝

Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 19-05-2026թ ՆԹ-6185-26
Աբովյան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալի հետ համաձայնեցված 14-08-2026թ. հ. 1112077
նախագիծը(երը)

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **24 ամսվա** ընթացքում՝

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

☐ ավարտական ակտի տրամադրումից ամիս.

☑ ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և որոշմակնքված է **Աբովյան համայնքի ղեկավարի** կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի և այլ շահագրգիռ մարմինների հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը **1**

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական՝ _____) տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է: Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակի առկայությունը**:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԴԱՎԻԹ ՁԱՐՈՅԱՆ**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.
(ձևը փոփ. 16.06.16 N 630-Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3991

ԱՐՄԱՆ ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշման, Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրության, հաշվի առնելով Արման Ղեվոնդյանի լիազորած անձ Հովհաննես Մարտիրոսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 28-ի N Ք-5596).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արման Ղեվոնդյանին տալ ամառային խոհանոցի և լողավազանի կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Արման Ղեվոնդյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Աբովյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

PMFE-B347-BAC1-87C7

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N ՇԹ/758/34835-26 14-08-2026

Տրված է կառուցապատող **ԱՐՄԱՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ (1714900558, ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, ՊՏՂՆԻ, 3 Փ., 16Շ),**
հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Պտղնի 12-րդ փողոց 2 հողամաս**

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Օբյեկտի անվանումը՝ **Ամառային խոհանոց և լողավազան,** աշխատանքի տեսակը՝ **կառուցում,**
Ռիսկայնության աստիճանը՝ II

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1) մշակվել են **«Աշխատանքային նախագիծ»**,
ճարտարապետական մաս՝ «ԷՅՋ ԴԻ ԷՄ» ՍՊԸ(ԴԱՎԻԹ ՊԱՊԻԿՅԱՆ, արտոնագիր՝ ՃԱԴ-Ա1-026)
կոնստրուկտորական մաս՝ «ԷՅՋ ԴԻ ԷՄ» ՍՊԸ(ՁՈՀՐԱԲ ԴՈՒՐՅԱՆ, արտոնագիր՝ ԿԵԴ-Ա2-060) կողմից

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ N202/26 «ԷՅՋ ԴԻ ԷՄ» ընկերության կողմից

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների՝
Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 19-03-2026թ ՆԹ-3077-26
Աբովյան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալի հետ համաձայնեցված 14-08-2026թ. հ. 1104667
նախագիծը(երը)

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **24 ամսվա** ընթացքում՝

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

- ☐ ավարտական ակտի տրամադրումից ամիս.
- ☑ ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է **Աբովյան համայնքի ղեկավարի** կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի և այլ շահագրգիռ մարմինների հետ:

(Նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը **1**

(Նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝

(Նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդվող ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական՝ _____) տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է: Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակի առկայությունը**:

(Նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԴԱՎԻԹ ՁԱՐՈՅԱՆ**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.
(ձևը փոփ. 16.06.16 N 630-Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3990

ՄԱՐԻԱՄ ԽԱՆՈՒՄՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրության և հիմք ընդունելով Մարիամ Խանումյանի հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 11-ի N Ք-6130).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարիամ Խանումյանին տալ բնակելի տան, լողավազանի, ամառային խոհանոցի, պահակատան և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Խանումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ Դ. ԶԱՐՈՅԱՆ

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

PM4F-AE4F-7A23-951B

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային քնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ՆԹ-10431-26 14.08.2026թ.

Օբյեկտ **Կառուցում, բնակելի տուն, լողավազան, ամառային խոհանոց, պահակատուն և պարսպապատում,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ III նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Կոտայք, համայնք՝ Աբովյան գյուղ Առինջ Վ. Տերյան թաղամասի 2-րդ փողոց 8 հողամաս, 07-011-0168-0003**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **ՄԱՐԻԱՄ ԽԱՆՈՒՄՅԱՆ / 5701920402 / ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ., 107Շ, 6ԲՆ**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԻԱՄ ԽԱՆՈՒՄՅԱՆ 16042026-07-0211**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 14.02.2028թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	Բնակելի կառուցապատման բնակավայրերի (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում. դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափսերը	0.0997 (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(Ha))
3. Հողամասի առկա վիճակը	Հողամասը ծանրաբեռնված չէ (տելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները	Ներհամայնքային նշանակության ճանապարհ (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ սուորգետնյա)

6. (*) Կից հողամասեր — Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) — Առկա չեն

(հուշարձանի անվանումը)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ — Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ — նախագիծը մշակել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով տրված հողատարածքի սահմաններում:

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ծավալատարածական, տեխնիկների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — ըստ նորմերի

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) — ըստ նորմերի

9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) — Համաձայն գլխավոր հատակագծի

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյմանկային շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, տեղամասայնության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) — ըստ նորմերի

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) — մինչև 40 % +10 % անջրանցիկ

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%)) — 50 % և ավելի

9.7 այլ պահանջներ — • Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները • Համաձայն Աբովյան համայնքի ավագանու 06.12.2022թ. N 174-Ա որոշման՝ շինությունների արտաքին պատերի համար նախատեսել սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը — Առկա չէ

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները — Համաձայն նորմերի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում	Համաձայն նորմերի (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2 (*) Էլեկտրամատակարարում	Համաձայն նորմերի (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Համաձայն նորմերի (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	Համաձայն նորմերի (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	Առկա չեն
12.6. աղբահանություն	համայնքային
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել տարածքի ջրահեռացում: (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները. կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր	Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր: (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները ուանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	Ըստ նախագծի (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներներ	Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը
19. Շրջակա միջավայրի պահպանում	ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Ըստ նորմերի (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	մինչև 14.02.2028թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	Պարզ փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	Համաձայն նորմերի (իրավատու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ	Համաձայն նորմերի (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)
25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում	Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ների)) հետ Մինչև շինարարական աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ (նշվում են սույնալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

չի պահանջվում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման ընթացքում սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

• Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին: • Շինությունը նախագծել 22.05.2023թ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:

28. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3989

ՍԱՐԳԻՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրությունը և հաշվի առնելով Սարգիս Թադևոսյանի լիազորած անձ Վլադիմիր Հարությունյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 04-ի N Ք-5886).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սարգիս Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի հունվարի 08-ի N 08012024-07-0064 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հադրութ թաղամասի 1-ին փողոց 1-ին նրբանցքի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքի բաժանված մասերին՝ «Արման Ավետիսյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2026 թվականի հուլիսի 27-ին կազմված բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 1-ին առանձնացվող հատվածին (3044.7 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Հադրութ թաղամասի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 1/2, 2-րդ առանձնացվող հատվածին (4736.5 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Հադրութ թաղամասի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 1, 3-րդ առանձնացվող հատվածին (4203.5 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Հադրութ թաղամասի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 1/3:
2. Սարգիս Թադևոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 30 000 (երեսուն հազար) դրամ տեղական վճար՝ հասցեների տրամադրման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**


2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

Սեփականատեր -	Սարգիս Թադևոսյան

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Հադրութ թաղամասի 1-ին փողոց 1-ին նրբանցք 1

Մարզ, համայնք, հասցե



Մակերես հա	1.1985
Ծածկագիր	07-002-0039-1781
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

1:2000

Որակավորում ունեցող անձ	Արման Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը	0161
Ստորագրություն	
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը	«Արման Ավետիսյան» ԱՁ
ՀՎՀՀ	26558521
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	հանութագրման	20.05.2026
	հատակագծի կազմման	27.07.2026

Կ.Տ.

Սեփականատեր	Սարգիս Թադևոսյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Հադրութ թաղամասի 1-ին փողոց 1-ին նրբանցք 1


Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ 12.08.2026թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.30447
Ծածկագիր	07-002-0039-1781-ից
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4461393.5038	8469319.4543	32.22
2	4461425.7272	8469319.4543	45.00
3	4461462.3242	8469345.6359	36.35
4	4461441.1744	8469375.1995	47.67
5	4461393.5038	8469375.1995	55.75
1	4461393.5038	8469319.4543	

Մասշտաբ՝ 1:2000

Որակավորում ունեցող անձ	Արման Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը	0161
Ստորագրություն	
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը	«Արման Ավետիսյան» ԱՁ
ՀՎՀՀ	26558521
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	հանութագրման	20.05.2026
	հատակագծի կազմման	27.07.2026

Կ.Տ.

Սեփականատեր -	Սարգիս Թադևոսյան


ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Հադրութ թաղամասի 1-ին փողոց 1-ին նրբանցք 1

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ	12.08.2026թ.
Համայնքի ղեկավար	Կ.Տ.
անուն, ազգանուն, հայրանուն	



Մակերես հա	0.47365
Ծածկագիր	07-002-0039-1781-հg
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4461425.7272	8469319.4543	55.00
2	4461480.7252	8469319.4543	104.48
3	4461565.7011	8469380.2463	60.25
4	4461507.6970	8469396.5390	66.52
5	4461453.5966	8469357.8355	15.00
6	4461462.3242	8469345.6359	45.00
1	4461425.7272	8469319.4543	

Մասշտաբ՝ 1:2000

Որակավորում ունեցող անձ	Արման Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը	0161
Ստորագրություն	
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը	«Արման Ավետիսյան» ԱՁ
ՀՎՀՀ	26558521
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	հանութագրման	20.05.2026
	հատակագծի կազմման	27.07.2026

Կ.Տ.

Սեփականատեր -	Սարգիս Թադևոսյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Հադրութ թաղամասի 1-ին փողոց 1-ին նրբանցք 1


Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ 12.08.2026թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.42035
Ծածկագիր	07-002-0039-1781-ից
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
1	4461393.5038	8469375.1995	6.00
2	4461399.5038	8469375.1995	41.67
3	4461441.1744	8469375.1995	21.35
4	4461453.5966	8469357.8355	58.83
5	4461501.4416	8469392.0639	7.69
6	4461507.6970	8469396.5390	62.13
7	4461447.8842	8469413.3397	19.02
8	4461429.3956	8469417.8070	18.80
9	4461411.0773	8469422.0367	

Մասշտաբ՝ 1:2000

Որակավորում ունեցող անձ	Արման Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը	0161
Ստորագրություն	
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը	«Արման Ավետիսյան» ԱՁ
ՀՎՀՀ	26558521
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	հանութագրման	20.05.2026
	հատակագծի կազմման	27.07.2026

Կ.Տ.

Հողամասի			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
9	4461411.0773	8469422.0367	18.03
10	4461393.5038	8469426.0904	
1	4461393.5038	8469375.1995	50.89

Որակավորում ունեցող անձ			Արման Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը			0161
Ստորագրություն			
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը			«Արման Ավետիսյան» ԱՁ
ՀՎՀՀ			26558521
Ստորագրություն			
ամիս ամսաթիվ	հանութագրման	20.05.2026	
	հատակագծի կազմման	27.07.2026	

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3988

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրությունը և հաշվի առնելով Հարություն Եպիսկոպոսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի N Ք-6079).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հարություն Եպիսկոպոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2026 թվականի օգոստոսի 07-ի N 07082026-07-0164 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Պ. Դուրյան թաղամասի 6-րդ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքի բաժանված մասերին՝ «Նեֆրիտ Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի օգոստոսի 10-ին կազմված բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 1-ին առանձնացվող հատվածին (500.0 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Պ. Դուրյան թաղամասի 6-րդ փողոց, 6/1, 2-րդ առանձնացվող հատվածին (499.0 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Պ. Դուրյան թաղամասի 6-րդ փողոց, 6:
2. Հարություն Եպիսկոպոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ հասցեների տրամադրման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Եպիսկոպոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան


Սեփականատեր	
Հարություն Եպիսկոպոսյան	

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ /ՄԻԱՎՈՐՄԱՆ/ ՍԽԵՄԱ

Կոտայքի մարզ համայնք Աբովյան գյուղ Առինջ Դուրյան թաղամաս 6 փողոց 6 հողամաս

Մարզ, համայնք, հասցե

Չև 2



Մակերես հա	0.0999 հա
Ծածկագիր	07-011-0396-0003
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:1000

Որակավորում ունեցող անձ	Համլետ Սարյան
Որակավորման վկայականի համարը	0131
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	«Նեֆրիտ Մայնինգ» ՍՊԸ
ՀՎՀՀ	05559521
Ստորագրություն	


Ամիս Ամսաթիվ	չափագրության	30.07.2026թ.
	հատակագծի կազմման	10.08.2026թ.

Կ.Տ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր	Կոտայքի մարզ համայնք Աբովյան գյուղ Առինջ Դուրյան թաղամաս 6 փողոց 6 հողամաս	Չև 1
Հարություն Եպիսկոպոսյան	Մարզ, համայնք, հասցե	Հաստատում եմ 19.08.2026թ.
		Կ.Տ.
	Հողահատկացման հիմքը	անուն, ազգանուն, հայրանուն

Բաժանվող հատված 1 0.05 հա



Մակերես հա	0.05 հա
Ծածկագիր	07-011-0396-0003-ից
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4453547.71	8465388.75	40.07
2	4453570.63	8465355.88	12.50
3	4453580.85	8465363.09	40.07
4	4453557.89	8465395.93	12.46
1	4453547.71	8465388.75	

Մասշտաբ 1:2000

Որակավորում ունեցող անձ		Համլետ Ասրյան
Որակավորման վկայականի համարը		0131
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«Նեֆրիտ Մայնինգ» ՍՊԸ
ՀՎՀՀ		05559521
Ստորագրություն		
Ամիս Ամսաթիվ	չափագրության	30.07.2026թ.
	հատակագծի կազմման	10.08.2026թ.


Կ.Տ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր	Կոտայքի մարզ համայնք Աբովյան գյուղ Առինջ Դուրյան թաղամաս 6 փողոց 6 հողամաս	Հաստատում եմ 12.08.2026թ.
Հարություն Եպիսկոպոսյան	Մարզ, համայնք, հասցե	Կ.Տ.
	Հողահատկացման հիմքը	անուն, ազգանուն, հայրանուն

Էջ 1

Բաժանվող հատված 2 0.0499 հա



Մակերես հա	0.0499 հա
Ծածկագիր	07-011-0396-0003-ից
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4453557.89	8465395.93	40.07
2	4453580.85	8465363.09	12.51
3	4453591.07	8465370.30	40.07
4	4453568.02	8465403.07	12.40
1	4453557.89	8465395.93	

Մասշտաբ 1:2000

Որակավորում ունեցող անձ		Համլետ Ասիյան
Որակավորման վկայականի համարը		0131
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«Նեֆրիտ Մայնինգ» ՍՊԸ
ՀՎՀՀ		05559521
Ստորագրություն		
Ամիս Ամսաթիվ	չափագրության	30.07.2026թ.
	հատակագծի կազմման	10.08.2026թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3987

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2026 թվականի մարտի 18-ի N 47-Ա որոշման, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրությունը և հաշվի առնելով Հայկ Պետրոսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի N Ք-6063).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2025 թվականի փետրվարի 10-ի N 10022025-07-0157 վկայական) անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, գյուղ Մայակովսկի, Մայակովսկի-Ձորաղբյուր խճուղի, 19/1:
2. Հայկ Պետրոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ տեղական վճար՝ հասցեի տրամադրման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3986

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրությունը և հաշվի առնելով Ավետիք Թևոսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի N Ք-6058).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող (հիմք՝ 2002 թվականի օգոստոսի 09-ի N 0167462 վկայական) անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, գյուղ Արամուս, Տիգրանաձորի խճուղի, 1-ին փակուղի, 3:
2. Ավետիք Թևոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ տեղական վճար՝ հասցեի տրամադրման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3985

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԻ ՊՏՂՆԻ-1 ԱՅԳԵՏԱՐԱԾՔԻ 18-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-ին կետերի, Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրության, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները (կառուցված՝ 1993 թվականին) կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արսեն Գաբրիելյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 07-ի N Ք-4958).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արսեն Միքայելի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2026 թվականի հունվարի 26-ի N 26012026-07-0089 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղի Պտղնի-1 այգետարածքի 18-րդ թաղամասի թիվ 18 հասցեում գտնվող 718.7 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 484.8 քառակուսի մետր արտաքին, 399.0 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները համարել օրինական (Կադաստրի կոմիտեի 2026 թվականի օգոստոսի 06-ի N ԳՄ/16299-2026 գրություն):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Գաբրիելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3984

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Պ. ՍԵՎԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրության, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, ավտոտնակը, հարթակը և պարիսպները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արամ Ծերունյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 17-ի N Ք-5281).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արամ Վռամիկի Ծերունյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2004 թվականի մայիսի 13-ի N 1777947 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Պ. Սևակ թաղամասի 2-րդ փողոցի թիվ 8 հասցեում գտնվող 757.1 քառակուսի մետր փաստացի մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 429.1 քառակուսի մետր արտաքին, 338.6 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը, 31.3 քառակուսի մետր արտաքին, 25.4 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը, 2.0 քառակուսի մետր մակերեսով հարթակը և 6.2 քառակուսի մետր մակերեսով պարիսպները համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026TGECNV):
2. Արամ Ծերունյանը պարտավոր է ինքնակամ կառուցված բնակելի տան, ավտոտնակի, հարթակի և պարիսպների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 1 502 332 (մեկ միլիոն հինգ հարյուր երկու հազար երեք հարյուր երեսուներկու) դրամ, հակառակ դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Ծերունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

Սեփականատեր - Արամ Ծերունյան	
Պատվիրատու - Արամ Ծերունյան	

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՆԿԱՐ

Կոտայքի մարզ գ. Առինջ	Գրանցման համար 12 08 2026թ.
Մարզ, համայնք, հասցե	Գրանցման ստացման ամսաթիվ Կ.Տ.
Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի գործ 2-1217 18.12.2003թ. վճիռ	անուն, ազգանուն, հայրանուն
Հողատեղադրման հիմքը	



Մակերես հա	0.07571
Ծածկագիր	07-011-0087-0004
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ

Հողամասի

Կետերի համարները	Կոորդինատներ y	Կոորդինատներ x	Կետերի սահմանները
1	8463970,8567	4454816,9835	
2	8463958,0376	4454854,8080	39,94
3	8463976,1068	4454860,8671	19,06
4	8463978,8338	4454852,6554	8,65
5	8463982,8679	4454840,5078	12,80
6	8463988,7230	4454822,8766	18,58
1	8463970,8567	4454816,9835	18,81

Մասշտաբ 1:500

Որակավորում ունեցող անձ	Գեղամ Մաթևոսյան
Որակավորման վկայականի համարը	0484
Ստորագրություն	
Գրանցամատյանի անձի ՀԱՀ-ի տեղեկատվության	ՀԱՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑ
ՀԱՀ	03572682
Ստորագրություն	
ամիս, ամսաթիվ հանձնման	02.02.2026
ամիս, ամսաթիվ հատակագծի կազմման	31.03.2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑ
03572682
«ԳԵՈՏՐԵՔ»
GEOTRACK

1.Քնակելի Տուն			
Հրապարակային բեկման կետեր	y	x	Կծերի չափերը
1	8463973,2548	4454838,7299	
2	8463972,6244	4454840,6280	2.00
3	8463971,3867	4454840,2169	1.30
4	8463968,4539	4454849,0482	9.31
5	8463967,2526	4454848,6492	1.27
6	8463966,1371	4454852,0908	3.62
7	8463966,2283	4454852,7624	0.68
8	8463967,1829	4454854,3529	1.85
9	8463967,4055	4454854,5539	0.30
10	8463967,6357	4454854,7012	0.27
11	8463967,9310	4454854,8254	0.32
12	8463969,6300	4454855,3848	1.79
13	8463969,7093	4454855,5532	0.19
14	8463969,6457	4454855,7354	0.19
15	8463970,7282	4454855,0908	1.26
16	8463971,0962	4454855,8266	0.82
17	8463973,2352	4454856,5369	2.25
18	8463974,5417	4454852,6027	4.15
19	8463977,3890	4454853,5482	3.00
20	8463980,7802	4454843,3364	10.76
21	8463979,5465	4454842,9267	1.30
22	8463980,1768	4454841,0286	2.00
1	8463973,2548	4454838,7299	7.29

2.Ավտոտնակ			
Հրապարակային բեկման կետեր	y	x	Կծերի չափերը
1	8463974,5417	4454852,6027	
2	8463973,2352	4454856,5369	4.15
3	8463972,8624	4454856,4132	0.39
4	8463971,8566	4454859,4419	3.19
5	8463976,1068	4454860,8671	4.48
6	8463978,4233	4454853,8917	7.35
1	8463974,5417	4454852,6027	4.09

3.Աստիճանահարթակ			
Հրապարակային բեկման կետեր	y	x	Կծերի չափերը
1	8463968,0279	4454845,3681	
2	8463967,1138	4454847,9121	2.70
3	8463967,8267	4454848,1683	0.76
4	8463968,7408	4454845,6242	2.70
1	8463968,0279	4454845,3681	0.76

Որակավորում ունեցող անձ		Վահրամ Ահարոնյան
Որակավորման վկայականի համարը		0484
Ստորագրություն		
Իրավաբանական անձի/ՍՊ-ի անվանումը		«Գեոթրեք» ՍՊԸ
ՀՎՀՀ		03572682
Ստորագրություն		
ամիս, ամսաթիվ	հանութագրման	02.02.2026թ.
	հատակագծի կազմման	31.03.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

«ԳԵՈԹՐԵՔ» 03572682 Կ.Տ.

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ գ. Առինջ


Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Արամ Ծերունյան
Պատվիրատու	Արամ Ծերունյան

1. Բնակելի Տուն

1.1-ին հարկ

H=3.25
h=2.95
D=0.40
d=0.15-0.40



$S_{Արտ}$=154.9 քմ.

Լրացուցիչ նշումներ.	Մասշտաբ 1:100		
	Որակավորում ունեցող անձ		Վահրամ Ահարոնյան
	Որակավորման վկայականի համարը		0484
	Ստորագրություն		
	Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը		«ԳԵՈՏՐԵՔ»
	ՀՎՀՀ		03572682
	Ստորագրություն		
	ամիս, ամսաթիվ	չափագրության	02.02.2026թ.
		հատակագծի կազմման	31.03.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԶԱՆԱԶԱՆՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԳԵՈՏՐԵՔ»

03572682

GEOTRACK


ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ գ. Առինջ

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Արամ Ծերունյան
Պատվիրատու	Արամ Ծերունյան


2. Ավտոտնակ



2.1-ին հարկ

H=2.60
h=2.50
D=0.40

3. Աստիճանահարթակ



Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Վահրամ Ահարոնյան
Որակավորման վկայականի համարը	0484
Ստորագրություն	
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը	«ԳԵՈԹՐԻՔ» ՍՊԸ
ՀՎՀՀ	03572682
Ստորագրություն	
ամիս, ամսաթիվ — չափագրության	02.02.2026թ.
ամիս, ամսաթիվ — հատակագծի կազմման	31.03.2026թ.


ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ գ. Առինջ

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Արամ Ծերունյան
Պատվիրատու	Արամ Ծերունյան

1. Բնակելի Տուն



$S_{Արտ}$=144.4 քմ.

Լրացուցիչ նշումներ.

□ - Հենապատ

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Վահրամ Ահարոնյան
Որակավորման վկայականի համարը	0484
Ստորագրություն	
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը	«Գեոտրակ» ՍՊԸ
ՀՎՀՀ	03572682
Ստորագրություն	

ամիս, ամսաթիվ	չափագրության	02.02.2026թ.
	հատակագծի կազմման	31.03.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԳԵՈՏՐԱԿ» ՍՊԸ 03572682


ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ գ. Առինջ

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Արամ Ծերունյան
Պատվիրատու	Արամ Ծերունյան

1. Բնակելի Տուն



1.2-րդ հարկ

H=3.30
h=3.10
D=0.40
d=0.15-0.40

$S_{Արտ}$=129.8 քմ.

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Վահրամ Ահարոնյան
Որակավորման վկայականի համարը	0484
Ստորագրություն	
Իրավաբանական անձի/ԱՁ-ի անվանումը	«ԳԵՈՏՐԵՔ» ՍՊԸ
ՀՎՀՀ	03572682
Ստորագրություն	
ամիս. ամսաթիվ — ներկայացման	02.02.2026թ
ամիս. ամսաթիվ — հաստատագծի կազմման	31.03.2026թ

03572682
«ԳԵՈՏՐԵՔ»
GEOTRACK

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3983

«ԱՐԱՄՅԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 113-Ն, 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն, 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշումների, Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրության և հիմք ընդունելով «ԱՐԱՄՅԱՆ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Գառնիկ Մելիքսեթյանի հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 11-ի N S-2417).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել «ԱՐԱՄՅԱՆ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2026 թվականի երրորդ եռամսյակի համար Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի Նոր թաղամասի 1-ին փողոց թիվ 1 հասցեում տեղադրել արտաքին գովազդ (Թույլտվություն N 136 կցվում է):
2. Հաստատել արտաքին գովազդի էսքիզները՝ համաձայն հավելվածի:
3. «ԱՐԱՄՅԱՆ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105231345 հաշվեհամարին վճարել 38 745 (երեսունութ հազար յոթ հարյուր քառասունհինգ) դրամ տեղական տուրք՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԱԳ - 136

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

Տրված՝ ***12 օգոստոսի 2026 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
Այլ արտաքին գովազդ:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման և (կամ) բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«ԱՐԱՄՅԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀ ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա Իսակովի պ. 32/21, ՀՎՀՀ՝ 01283137:

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝
ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք Վերին Պտղնի Նոր թաղամասի 1-ին փողոց թիվ 1, 8.61 քմ:


Թույլտվության գործողության ժամկետը՝
01 հուլիսի 2026թ.-ից մինչև ***01 հոկտեմբերի 2026թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ _____ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

QR կոդի միջոցով կարող եք սփուգել թույլտվության վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում

Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2026 թվականի օգոստոսի 13-ի N 4006 որոշման

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶ



Ընդհանուր մակերես՝ 20 քմ

Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2026 թվականի օգոստոսի 12-ի N 3983 որոշման

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶՆԵՐ







Ընդհանուր մակերես՝ **8.61 քմ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3982

«ՆՈՐ ԶՈՎՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 113-Ն, 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն, 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշումների, Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրության և հիմք ընդունելով «ՆՈՐ ԶՈՎՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Գառնիկ Մելիքսեթյանի հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 11-ի N S-2418).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել «ՆՈՐ ԶՈՎՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2026 թվականի երրորդ եռամսյակի համար Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի Նոր թաղամասի 1-ին փողոցի թիվ 19 հասցեում տեղադրել արտաքին գովազդ (Թույլտվություն N 135 կցվում է):
2. Հաստատել արտաքին գովազդի էսքիզները՝ համաձայն հավելվածի:
3. «ՆՈՐ ԶՈՎՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105231345 հաշվեհամարին վճարել 534 410 (հինգ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր տասը) դրամ տեղական տուրք՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2026թ. օգոստոսի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԱԳ - 135

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

Տրված՝ ***12 օգոստոսի 2026 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
Այլ արտաքին գովազդ, ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդ:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման և (կամ) բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«ՆՈՐ ԶՈՎՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀ ք. Երևան Կենտրոն Հանրապետության փողոց 71, ՀՎՀՀ՝ 02556388:

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝
ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք Վերին Պտղնի գյուղ Նոր թաղամասի 1-ին փողոց թիվ 19, այլ արտաքին գովազդ՝ 108.7568 քմ, ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդ՝ 7.5 քմ:

Թույլտվության գործողության ժամկետը՝
01 հուլիսի 2026թ.-ից մինչև ***01 հոկտեմբերի 2026թ.***-ը:


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ Դ. ՋԱՐՈՅԱՆ


QR կոդի միջոցով կարող եք ստուգել թույլտվության վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում


Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2026 թվականի օգոստոսի 12-ի N 3982 որոշման

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶՆԵՐ










2.3m
2.3m
2.3m
0.4m
0.4m
0.4m
0.4m
0.4m
0.4m
2.5m
2.5m
2.5m
4.3m
4.3m
1.5m
1.5m
1.5m
1m
1m
1m
3.75քմ
3.75քմ
3.75քմ


2.32m
2.25m
2.32m
2.02m
24/7
ԺԱՄ
ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ
SUPERMARKET
1.5m
2.02m
3.375քմ
4.6864քմ
4.6864քմ
4.3m
2.28m
1.2m
2.736քմ


5m
3m







Ընդհանուր մակերես՝ **116.2568 քմ**

- Այլ արտաքին գովազդ՝ **108.7568 քմ**
- ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդ՝ **7.5 քմ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2026 թվականի N 3981

«ԷՄՄԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՆՎԵՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն, 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշումների, Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 30-ի N 376 կարգադրության և հիմք ընդունելով «Էմմա Ալեքսանյան Նվերի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 11-ի N Ք-6105).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Էմմա Ալեքսանյան Նվերի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2026 թվականի երկրորդ կիսամյակի համար Աբովյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահի վաճառատեղում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 66 կցվում է):
2. «Էմմա Ալեքսանյան Նվերի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ:
